ԿԱՐԾԻՔ

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետաիրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Ռոզա Աբաջյանի «Անմիջական ժողովրդաիշխանության տեսական ակունքների և ինստիտուցիոնալ իրավական ձևերի պատմական էվոլուցիան Հայաստանի նորագույն շրջանի սահմանադրական զարգացման պրակտիկայում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ռոզա Աբաջյանի ատենախոսությունը պատմական և տեսաիրավական ուղղվածության իրավական հետազոտություն է, որը շատ արդիական է, ինչ պայմանավորված է արդի իրավական համակարգում ժողովրդաիշխանության հայեցակարգի և համապատասխան իրավական ինստիտուտի, դրա իրականացման ձևերի նշանակությամբ: Մեր հանրապետության որպես սոցիալ-իրավական պետության կայացման պայմաններում շատ արդիական է ժողովրդաիշխանության ինստիտուտի պատմական ակունքների և արդի վիճակի հետազոտությունը, որն ունի նաև գործնական մեծ նշանակություն:

Թեկնածուական աշխատանքի ներածության մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակները և խնդիրները, ատենախոսության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը: Մեր կարծիքով աչքի են ընկնում հեղինակի կողմից հիմնահարցի մշակվածության աստիճանի և տեսական հիմքերի բավականին մանրազնին վերլուծությունը, ինչը ցույց է տալիս հեղինակի կողմից գիտության մեջ կատարած է ներդրումը:

Աշխատանքի առաջին գլխում՝ «Ժողովրդավարության տեսության ու ժողովրդաիշխանության անմիջական ձևերի հիմնահարցերը XX դարասկզբին. համաշխարհային միտումները և հայկական պետական փորձը», հեղինակը հետազոտել է հայ քաղաքական-իրավական մտքի նոր դարաշրջանի ներկայացուցիչների, ինչպես նաև կուսակցությունների պատկերացումները ժողովրդաիշխանության, դրա իրականացման ձևերի մասին, գնահատել դրանք ժողովրդավարացման արմատավորման համաշխարհային համատեքստում, վեր է հանել նոր դա-

ռաշրջանի հայ քաղաքական-իրավական մտքին բնորոշ առանձնահատկություններն իշխանության իրականացման ձևերի վերաբերյալ, ժողովրդի իշխանության կիրառված անմիջական ձևերն Առաջին հանրապետությունում և գնահատել դրանց օրինաչափ կապը ժամանակի սոցիալ-քաղաքական պայմանների հետ, ինչպես նաև ժողովրդաիշխանության հայեցակարգի դիրքերից հետազոտել է իշխանափոխության խնդիրը և գնահատել է ՀԽՍՀ-ի հռչակման գործընթացը լեգիտիմության ու լեգալության սկզբունքների տեսանկյուններից: Այդ ամենը հիմք է տվել հեղինակին հիմնավորելու մի շարք եզրակացություններ, որոնցից կարևոր արդիական նշանակություն ունի ու տեսականորեն հետաքրքիր է խորհրդայնացման գործընթացում իշխանափոխության հարցի իմաստավորումը «իշխանությունը ժողովրդից» սկզբունքի տեսանկյունից, իշխանափոխության արժեքավորումը լեգալության ու լեգիտիմության չափանիշներով:

Աշխատանքի երկրորդ գլխում («Սոցիալիստական դեմոկրատիայի» հայեցակարգը և անմիջական ժողովրդաիշխանության ձեվերի հիմնահարցը խորհրդային Հայաստանի սահմանադրական զարգացման ընթացքում) ատենախոսը հետազոտել է ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրությամբ ամրագրված «սոցիալիստական ժողովրդաիշխանության» սահմանադրական առանձնահատկությունները, ժողովրդաիշխանության ձևերի նկատմամբ մերժողականության պատճառները, ՀԽՍՀ 1937 թ. Սահմանադրության հիմքում դրված «սոցիալիստական ժողովրդաիշխանության» հայեցակարգը, վեր է հանել անմիջական ձևերի շրջանակի սահմանափակվածության պատճառները, ուսումնասիրել է «սոցիալիստական դեմոկրատիայի» տեսության էվոլուցիան խրուշչովյան ու գորբաչովյան վերակառուցման տարիներին, վեր է հանել անմիջական ձևերի նկատմամբ սոցիալիստական տեսական հայացքների առանձնահատկությունները: Ընդ որում թվարկված հիմնահարցերի վերլուծությունը կատարվել է ժողովրդաիշխանության ձևերի շրջանակի ու կիրառման համաշխարհային փորձի համատեքստում, ինչը շատ կարևոր է և ատենախոսության արժանիքներից մեկն է: Այս գլխում կատարված ուսումնասիրության արդյունքում հեղինակը հիմնավորել է մի շատ կարևոր օրինաչափություն այն մասին, որ սոցիալիստական համակարգի փլուզման պատճառը պատշաճ տեսության բացակայությունն էր, ինչի հետևանքով սոցիալիս-

տական բյուրոկրատիան խճճվեց: Սոցիալիստական ժողովրդավարության տեսությունն անտեսեց «աշխատավորների ժողովրդաիշխանության» պատշաճ ձևերի սահմանադրական երաշխավորման անհրաժեշտությունը, ավելի շատ կարևորեց ամուր պետական իշխանությունը, կենտրոնացված կառավարումը: Այս ամենի հետևանքը սոցիալիստական պետության կործանումն էր:

Հեղինակը աշխատանքի երրորդ գլխում՝«Ժողովրդի իշխանության ազատական հայեցակարգը և դրա կենսագործումը Հայաստանի երրորդ հանրապետության սահմանադրական զարգացման գործընթացում», հեղինակը հետազոտել է այն գործոններն ու պայմանները, որոնց ազդեցությամբ ընտրվեց Երրորդ հանրապետության սոցիալ-քաղաքական զարգացման ուղղությունը, այդ թվում ժողովրդաիշխանության ձևերի շրջանակը, վերլուծել է 1995 և 2005 թթ. խմբագրությամբ Սահմանադրություններում ամրագրված ժողովրդաիշխանության հայեցակարգը և դրանց նորմատիվ տեսլականը, վեր հանել դրանց սոցիալ-քաղաքական արդյունքները, ուսումնասիրել ժողովրդաիշխանության սկզբունքի սահմանադրական ամրագրման առանձնահատկությունները ազատական երկրներում և այդ համատեքստում վերլուծության ենթարկել ՀՀ Սահմանադրությունը և դրա կիրառած իրավական տեխնիկան: Այս ամենի համատեքստում ատենախոսը վերլուծել է նաև 2015 թ. սահմանադրական բարեփոխումները ժողովրդաիշխանության ձևերի շրջանակի ու կատարելագործման տեսանկյունից, փորձել է վեր հանել ապագա իրավական քայլերն այդ ուղղությամբ: Կատարված հետազատական աշխատանքը հնարավորություն է տվել հեղինակին կառուցելու գիտականորեն ճիշտ և հիմնավորված եզրակացություններ, առաջարկելու, ինչը շատ կարևոր է, անմիջական ժողովրդաիշխանության կատարելագործման մի քանի կոմպոնենտներից բաղկացած քաղաքական իրավական ծրագիր:

Կարծում ենք, ատենախոսի վերը բերված և աշխատանքում տեղ գտած այլ եզրակացություններն արդիական են, ունեն նաև որոշակի գործնական-իրավական նշանակություն ոլորտում իրավական քաղաքականության մշակման ու կենսագործման համար:

Ատենախոսության արժանիքներից է ուշադրության կենտրոնացումը հատկապես 3-րդ հանրապետությունում ժողովրդաիշխանության ձևավորման

պատմության բարդ հիմնախնդիրների վրա: Հեղինակը կարողացել է կատարել իր առջև դրված խնդիրները, իրականացնել գիտական վերլուծություն, ապահովել ատենախոսական աշխատանքին ներկայացվող պահանջները:

Ատենախոսության եզրահանգումներն ու պաշտպանության ներկայացված դրույթները պարունակում են գիտական նորույթ: Հեղինակը լրացրել է ժողովրդաիշխանության անմիջական եղանակի և դրա իրականացման ձևերի իրավական ինստիտուտի Հայաստանի երեք հանրապետություններում ձևավորման ու կայացման պատմության հատազոտական բացը:

Ռոզա Աբաջյանի թեկնածուական ատենախոսության եզրահանգումները հիմնավորված են: Դրանց հիմքում ընկած են հստակ աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքեր: Այս առումով աչքի են ընկանում հատկապես թեմայի տեսական աղբյուրները, որոնք բավականին շատ հարուստ են ու ընդգրկուն՝ սկսած XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական գործիչների երկերից մինչև արդի հայաստանյան ու արտասահմանյան տեսական գրականությունը: Սակայն ատենախոսության աղբյուրագիտական հիմքերից մենք հատկապես կարևորում ենք սոցիալական հարցումների տվյալները, որոնք հեղինակ մասամբ վերցրել է այլ հետազոտողներից, մասամբ էլ իրականացրել է անձամբ, ընդ որում 2020 թ.-ին: Այս փաստը մենք համարում ենք կարևոր, հատկապես որ արդի իրավագիտական հետազոտություններում նման հետազատություններ գրեթե չեն հանդիպում:

Այդ ամենով հանդերձ աշխատանքի վերաբերյալ կան որոշ նկատառումներ.

1. Աշխատանք 1-ին և 3-րդ գլուխներում՝ Հայաստանի Առաջին և Երրորդ հանրապետություններում ժողովրդաիշխանության անմիջական ձևերի ինստիտուտի կայացման պատմությունը ուսումնասիրելիս, հեղինակն անդրադարձեր է կատարում նաև անմիջական ձևերը կարգավորող ընթացիկ օրենսդրությանը, ժամանակագրական կարգով ներկայացնելով ժողովրդաիշխանության անմիջական ձևերը կարգավորող օրենսդրական ակտերը, որոշ դեպքերում նաև դրանց կիրառման պրակտիկան: Այդպիսի մոտեցում չենք նկատում ատենախոսության 2-րդ գլխում՝ նվիրված խորհրդային Հայաստանի սահմանադրական զարգացման ընթացքում անմիջական ժողովրդաիշխանության ձևերի հիմնահարցերին: Այստեղ հետազոտության հիմնական աղբյուր են ծառայել խորհրդային

սահմանադրությունները: Կարծում ենք ցանկալի կլիներ քննարկման առարկա դարձնել խորհրդային ընթացիկ օրենսդրությունը և դրա կիրառման պրակտիկան:

2. Մեր կարծիքով հեղինակը աշխատանքի 3-րդ գլխում քննարկելով ժողովրդի իշխանության ազատական հայեցակարգը և դրա կենսագործումը Հայաստանի երրորդ հանրապետության սահմանադրական զարգացման գործընթացում և արժեքավորելով ու գնահատելով 1995, 2005 թթ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունները, որոշակիորեն շատ խիստ է գնահատում դրանցում տեղ գտած իրավակարգավորումները, մատնանշելով անմիջական ժողովրդաիշխանության հարցում դրանց հայեցակարգային ու նորմատիվ կարգավորման մի շարք բացթողումներ ու թերություններ (տե՛ս 3-րդ գլխի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթագլուխները և դրանց համապատասխան եզրակացությունները): Իհարկե, ատենախոսն ունի սեփական տեսակետի իրավունքը, սակայն, կարծում ենք, որ այդ գնահատականների հետ միանշանակ դժվար է համաձայնվել:

Չնայած դիտողություններին՝ աշխատանքը որպես գիտական հետազոտություն բնութագրվում է դրական կողմերով: Այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով, ունի հարուստ պատմահիրավական ու տեսահիրավական հայրենական ու արտասահմանյան աղբյուրագիտական հիմք, Հայաստանում պատմական զարգացման ամեն մի փուլում անմիջական ժողովրդաիշխանության հիմնահարցերը վերլուծության են ենթարկված համաշխարհային համատեքստում, շարադրված է իրավաբանորեն գրագետ ոճով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արատացոլված են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ռոզա Աբաջյանի «Անմիջական ժողովրդաիշխանության տեսական ակունքների և ինստիտուցիոնալ իրավական ձևերի պատմական էվոլուցիան Հայաստանի նորագույն շրջանի սահմանադրական զարգացման պրակտիկայում» ատենախոսությունն ունի գիտական նորույթ, բավարարում է ՀՀ կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով նման բնույթի աշխատանքներին ներկայացվող պահանջներին, կատարված է անհրաժեշտ տեսական բավարար մակարդակով,

իսկ նրա հեղինակն արժանի է հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետաիրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, **Արմեն Կառլենի Եսայան**

ի. գ. դ., պրոֆեսոր Ա. Եսայանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հ.Մ. Խաչիկյան _____

7.07.2020 թ.